# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

## «09» հունվարիի 2014թ. N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-14/1-24 գնման պայմանագրի

*ք. Երևան* — «20«հունվարի 2014թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Դանիելյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2014 թվականի հունվարի 9-ին կողմերի միջև կնքված N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-14/1-24 ծածկագրով գնման պայմանագրի 9.1.1 և 9.4 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2014 թվականի հունվարի 9-ին կնքված N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-14/1-24 ծածկագրով գնման պայմանագիրը լրացնել վճարման ժամանակացույց հավելվածով (Հավելված 3)՝ համաձայն հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196061<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br><br>---------------- Շ.Ավագյան.<br>/ ստորագրություն/<br><br>Կ.Տ | «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ<br>ք. Երևան, Պուշկինի 1<br>հեռ. 010-54-09-11, 010-52-67-46<br>«Պրոմեթեյբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1660001996600100<br>ՀՎՀՀ 02614085<br>Էլ. հասցե cpsarmenia@gmail.com<br><br>Ա.Դանիելյան<br>(ստորագրություն)<br><br>Կ.Տ. |

Հավելված 3
09.01. 2014 թ կնքված
N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-14/1- 24 ծածկագրով գնման պայմանագրի

## Վճարման ժամանակացույց

| 1 | Գնման ենթակա ապրանքներ | Նախատեսվում է ֆինանսավորել 2014 թվականին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին,ընդ որում՝ | | | | | | | | | | | | ՀՀ Դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 2 | բենզին պրեմիում 01.01.01.04 | 136000 | 273000 | 409000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 | 470000 |
| 3 | բենզին ռեգուլյար 01.01.01.04 | 210000 | 420000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 | 630000 |
| 4 | բենզին պրեմիում 01.01.03.06 | 315000 | 630000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 | 940000 |
| 5 | բենզին ռեգուլյար 01.01.03.06 | 360000 | 720000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 | 1080000 |
| 6 | Ընդհամենը | | | | | | | | | | | | | 3120000 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն | ք. Երևան, Պուշկինի 1 |
| ք.Երևան, Հանրապ. Հրապ.,Կառ. 2 շենք | հեռ. 010-54-09-11, 010-52-67-46 |
| ՀՎՀՀ 02527728 | «Պրոմեթեյբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011196095 | Հ/Հ 1660001996600100 |
| Հ/Հ 900011196061 | ՀՎՀՀ 02614085 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | էլ. հասցե cpsarmenia@gmail.com |
| Է.Ավագյան. /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

**ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ-14/1-24**

*ք. Երևան* << 09 >> հունվարի 2013թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Շ.Ավագյանի, որը գործում է ՀՀ ԱԳ նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) մի կողմից, և «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Դանիելյանի (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1.Պայմանագրի առարկան**

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ծնով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված վառելիք /այսուհետև՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1. **Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է գնորդին

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. **Կողմերի իրավունքները և պարտականությունները**

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն Պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք՝

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարել սույն Պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

3.1.4 Միակողմանի լուծել սույն Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.4.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին,

**3.2 Գնորդը պարտավոր է.**

3.2.1 Կատարել Պայմանագրին և Համաձայնագրերին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը,

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

3.3.3 Գնորդից պահանջել հատուցելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն Պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**4.Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 3120000 (երեք միլիոն հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կողմերի

միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր և վճարման ժամանակացույց (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը:

**5.Ապրանքի որակը և երաշխիքը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները,

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝

Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրած հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, Արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն Պայմանագրով նախատեսված միջոցները;

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման Արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման Արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի, և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ Պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն Պայմանագրի առաջին կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ զրո հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանգրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.1.1 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը կմատուցվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր: Պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ)

վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կհանդիսանային գնման Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փախհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողությունները) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը և (կամ) վնասն են:

Սույն Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները, և դրանցից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքերում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN1, 2, և 4 հավելվածները, բաղկացած 3 թերթից, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>Երևան 0010, Հանրապետության<br>Հրապարակ կառավարական 2 շենք<br>ՀՎՀՀ 02527728<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ900011196061<br>Հ/Հ900011196085<br>Շ.Ավագյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ք. Երևան, Պուշկինի 1<br>հեռ. 010-54-09-11, 010-52-67-46<br>«Պրոմեթեյբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1660001996600100<br>ՀՎՀՀ 02614085<br>էլ. հասցեն՝ cpsarmenia@gmail.com<br>Դանիելյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված 1
09.01.2014թ կնքված
N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ 14/1-24 ծածկագրով գնման պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| NN | Ապրանքի անվանումը | Տեխնիկական բնութագրերը | Չափման միավորը |
|---|---|---|---|
| 1 | Բենզին պրեմիում | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 $^{0}$C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ$^{3}$, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ ($C_5$ և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» | լիտր |
| 2 | Բենզին ռեգուլյար | Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 $^{0}$C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ ($C_5$ և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, | լիտր |

| | | | |
|---|---|---|---|
| | | անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի» | |

**Պարտադիր պայման՝ Ապրանքները պետք է լինեն չօգտագործված**
**Մատակարարումը՝ կտրոնային**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք<br>ՀՎՀՀ՝ 02527728<br>Հ/Հ 900011196061<br>Հ/Հ 900011196095<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն<br>------------ Հ. Ավագյան.<br>/ ստորագրություն/ | ք. Երևան, Պուշկինի 1<br>հեռ. 010-54-09-11, 010-52-67-46<br>«Պրոմեթեյբանկ» ՓԲԸ<br>Հ/Հ 1660001996600100<br>ՀՎՀՀ 02614085<br>էլ. հասցեն՝ cpsarmenia@gmail.com<br>------------ Դանիելյան<br>(ստորագրություն) |

Հավելված 2
09.01. 2014թ.կնքված
N ԱԳՆ-ՇՀԱՊՁԲ 14/1-24 ծածկագրով գնման պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| 1 | | | Նախատեսում է գնել 2014թ-ին (մատակարարման ժամկետը առնվազն 30 աշխատանքային օր) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Ըստ ծրագրերի | Գնման ենթակա ապրանքներ անվանումը | Չափման միավոր | միավորի գինը | Iեռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Ընդհամենը քանակ | Ընդամենը գումար |
| 3 | 01.01.01.04 նախարարի աշխատակազմ | բենզին պրեմիում | լիտր | 470 | 1000 | | | | 1000 | 470000 |
| 4 | 01.01.01.04 նախարարի աշխատակազմ | բենզին ռեգուլար | լիտր | 450 | 1400 | | | | 1400 | 630000 |
| 5 | 01.01.03.06 նախարարության աշխատակազմ | բենզին պրեմիում | լիտր | 470 | 2000 | | | | 2000 | 940000 |
| 6 | 01.01.03.06 նախարարության աշխատակազմ | բենզին ռեգուլար | լիտր | 450 | 2400 | | | | 2400 | 1080000 |
| 7 | | Ընդհամենը | լիտր | | | | | | | 3120000 |

ԳՆՈՐԴ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ք.Երևան,Հանրապ.Հրապ.,Կառ. 2 շենք
ՀՎՀՀ՝ 02527728
Հ/Հ 900011196095
Հ/Հ 900011196061
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառն.վարչություն

Շ.Ավագյան.
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Պուշկինի 1
հեռ. 010-54-09-11, 010-52-67-46
«Պրոմեթեյբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001996600100
ՀՎՀՀ 02614085
Էլ.փոստ՝ cps.armenia@gmail.com

/ստորագրություն/

*Հավելված 4*
09.01. 2014թ. կնքված
N ԱԳՆ-ԾՀԱՊՁԲ-14/1-24 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱԳՆ

ՎԱՃԱՌՈՂ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<__>> <<_________>> 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ <-------------------------->>:

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<>> <<>> 2014 թ.

(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)

Պայմանագրի համարը՝ << >>

Գնորդը, ի դեմս ------------------------------------------- և Վաճառողը՝ ի դեմս ------------------------ ---------------------, հիմք ընդունելով, պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Գնորդը <<__>> <<_________>> 2014թ-ից <<__>> <<_________>> 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ապրանքների մատակարարումը

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------- | ------------- | | ---------- |

Վերոհիշյալ ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_______________________
(ստորագրություն)
ազգանուն_______________
Կ.Տ

Ապրանքը ընդունեց

_______________________
(ստորագրություն)
ազգանուն_______________
Կ.Տ